ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցությանը, ինչպես նաև ԵՏՄ անդամ պետությունների աշխատողների սոցիալական ապահովության, կենսաթոշակային իրավունքների պահպանման, բժշկական օգնության և մասնագիտական գործունեության հարցերով խորհրդակցական կոմիտեի 4-րդ նիստին մասնակցելու նպատակով Ալմաթի (Ղազախստանի Հանրապետություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը՝**
Անահիտ Գալստյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կենսաթոշակային ապահովության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
Ալմաթի (Ղազախստանի Հանրապետություն), 2018 թվականի ապրիլի 3-6-ը

4. **Հրավիրող կողմը՝**
Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը՝**
Մասնակցություն կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցությանը, ինչպես նաև ԵՏՄ անդամ պետությունների աշխատողների սոցիալական ապահովության, կենսաթոշակային իրավունքների պահպանման, բժշկական օգնության և մասնագիտական գործունեության հարցերով խորհրդակցական կոմիտեի 4-րդ նիստին

6. **Քննարկված թեմաները**

1) «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության» պայմանագրի նախագիծ
2) Կենսաթոշակային ապահովության բնագավառում լիազոր, իրավասու մարմինների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև համագործակցության մասին կարգի նախագիծ
3) ԵՏՄ անդամ պետությունների աշխատողների սոցիալական ապահովության, կենսաթոշակային իրավունքների պահպանման, բժշկական օգնության և մասնագիտական գործունեության հարցերով խորհրդակցական կոմիտեի 4-րդ նիստի օրակարգ

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

04.04-05.04.2018թ. (Կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցություն)

Կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցության 1-ին մասում՝ 1-ին օրը և 2-րդ օրվա առաջին կեսին քննարկվել է **Կենսաթոշակային ապահովության բնագավառում լիազոր, իրավասու մարմինների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև համագործակցության մասին կարգի նախագիծը** (այսուհետ՝ կարգի նախագիծ)՝ հաշվի առնելով նախորդ՝ ս.թ փետրվարի 20-21-ը Բիշքեկում կայացած խորհրդակցության արդյունքները և դրանից հետո նախագծի վերաբերյալ կողմերի ներկայացրած առաջարկությունները:

Խորհրդակցությունը վարում էր Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային միգրացիայի և սոցիալական պաշտպանության վարչության պետ Պ. Ու. Սույումբաեվան, մասնակցում էին ԵՏՄ անդամ պետությունների կենսաթոշակային ապահովության բնագավառում լիազոր, իրավասու մարմինների ներկայացուցիչները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնատար անձինք, անկախ փորձագետ:

Որոշվեց կարգի նախագիծը քննարկել հոդված առ հոդված՝ և՛ բովանդակային, և՛ ձևակերպումների առումներով:

Նախանշված ժամանակահատվածում քննարկվեցին կարգի նախագծի 5 բաժիններ՝ ընդհանուր դրույթներ, հասկացություններ, կենսաթոշակի նշանակում, բժշկական հետազոտում և բժշկասոցիալական փորձաքննություն, կենսաթոշակների վճարում:

Ընդհանուր դրույթների և հասկացությունների բաժինների շուրջ քննարկում չծավալվեց՝ ներկայացված խմբագրությունն ընդունվելի էր բոլոր կողմերի համար:

Քննարկումներում հստակեցվեց կենսաթոշակի նշանակման ընթացակարգը: Մասնավորապես, կուտակային կենսաթոշակներին վերաբերող առանձնահատկությունները նպատակահարմար գտնվեց սահմանել կենսաթոշակների վճարման բաժնում, իսկ կենսաթոշակ նշանակելու դիմումի հիման վրա տեղեկատվական ձևաթղթի լրացման կարգը (ով պետք է ստորագրի՝ անձը, թե՝ աշխատակիցը և այդ հարցի պատասխանից ելնելով՝ այդ ձևաթուղթն անդամ պետություններ ուղարկելու ժամկետը) թողնվեց լրացուցիչ քննարկման:

Մասնակիցների կողմից առաջարկվեց արմատապես վերանայել հեռակա բժշկասոցիալական փորձաքննություն կատարելու՝ նախագծով առաջարկվող ընթացակարգը՝ դրանում հստակեցնելով իրավասու մարմինների, բժշկական կազմակերպության և բժշկասոցիալական փորձաքննություն կատարելու իրավասություն ունեցող պետական մարմնի գործառույթները:

Կենսաթոշակների վճարման ընթացակարգում նախապատվությունը տրվեց վճարման անկանխիկ եղանակին և առաջարկվեց կողմերին մեկ անգամ ևս անդրադառնալ կենսաթոշակների վճարման բացառապես անկանխիկ եղանակով վճարելու հարցին:

Քննարկման արդյունքում որոշվեց՝ ներկայացված առաջարկությունների, համաձայնեցված մոտեցումների հիման վրա խորհրդակցության արձանագրությամբ սահմանված ժամկետում հանձնաժողովը կլրամշակի կարգի նախագիծը և կարծիքի

կուղարկի կողմերին, որոնք դրա վերաբերյալ իրենց դիրքորոշումը կներկայացնեն հանձնաժողովին:

Խորհրդակցության 2-րդ օրվա 2-րդ կեսին քննարկվեց **Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության պայմանագրի նախագիծը** (այսուհետ՝ պայմանագրի նախագիծ):

Խորհրդակցությունը վարում էր հանձնաժողովի տնտեսական և ֆինանսական քաղաքականության գծով կոլեգիայի անդամ Տ. Մ Ժակսիլիկովը:

Քննարկվեցին պայմանագրի նախագծի այն դրույթները, որոնց վերաբերյալ կողմերը համաձայնություն ձեռք չէին բերել: Խմբագրական բնույթի առաջարկությունների մասով որոշվեց դրանց ձևակերպումները թողնել իրավաբաններին:

Պայմանագրի նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ կետի մասով կողմերը, բացառությամբ Հայաստանի ներկայացուցիչի, համաձայնվեցին բովանդակային առումով: Այն է՝ պետական նպաստներ նշանակելիս, եթե անձը այլ պետությունից ստանում է կենսաթոշակ, որի չափը չի գերազանցում նպաստի չափը, ապա նպաստը նշանակվում և վճարվում է նպաստի և կենսաթոշակի գումարի տարբերության չափով:

Հայկական կողմը, հաշվի առնելով կուտակային կենսաթոշակի բովանդակային առանձնահատկությունը առաջարկեց այն չփոխկապակցել նպաստի իրավունքին և առաջարկեց պետությունների համար սահմանել առանձնահատկություններ, իսկ կոնկրետ Հայաստանի համար՝ ներկայացնել խնդրո առարկա դրույթի նոր խմբագրություն:

Պայմանագրի նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետի (սահմանում է ՌԴ օրենսդրության համաձայն կենսաթոշակի իրավունքը որոշելիս աշխատավորի անհատական կենսաթոշակային գործակիցը՝ ԱԿԳ) շուրջ կողմերն ընդհանուր համաձայնություն ձեռք չբերեցին՝ բելառուսական և ղազախական կողմերը համաձայն են ռուսաստանի ներկայացուցիչների առաջարկին (ԱԿԳ=1), ղրղզական կողմն իր վերջնական դիրքորոշումը կներկայացնի պաշտոնական գրությամբ, իսկ հայկական կողմն առաջարկեց ԱԿԳ սահմանել 2:

Քննարկման արդյունքում որոշվեց՝ տարաձայնության առարկա դրույթը քննարկել ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանությունների ներկայացուցիչների հետ՝ մայիս ամսվա վերջին:

06.04.2018թ. ԵՏՄ անդամ պետությունների աշխատողների սոցիալական ապահովության, կենսաթոշակային իրավունքների պահպանման, բժշկական օգնության և մասնագիտական գործունեության հարցերով խորհրդակցական կոմիտեի 4-րդ նիստ

Նիստի օրակարգի հարցերից 5.1-ին, 5.3-րդ, 5.4-րդ, 6,2-րդ կետերի վերաբերյալ ներկայացվեց դիրքորոշում՝ պետական մասրմիններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Նիստի օրակարգի 5.2-րդ կետի վերաբերյալ դիրքորոշում կներկայացվի պաշտոնական գրությամբ, իսկ 6.1-ին, 6.2-րդ, 6.4-րդ կետերում նշված միջոցառումների մասով կշարունակվեն մասնագիտական քննարկումները:

Համապատասխան հանձնարարականները կողմերին կտրվեն նիստի արձանագրությամբ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկությունները հանձնաժողով կներկայացվեն գրավոր՝ կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցության արձանագրության համաձայն՝ նրանում նշված ժամկետներում:

9. Գործուղվողը

Անահիտ Զորիկի Գալստյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

11.04.2018թ